ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ*

ԱՐՄԵՆ ԳԱՐՈ

1914թ. հունիս ամսվա վերջերն էր, երբ Ա. Վռամյանը և ես, մի վերջին անգամ, քաղաքական լուրջ խոսակցություն ունեցանք Խալիլ բեյի տանը, Թալեաթ փաշայի, այն ժամանակ Թալեաթ բեյի հետ, ծրագրված հայկական բարենորոգման շուրջ:

Բայց նախքան այդ կարևոր խոսակցության անցնելը ավելորդ չեմ համարում մի քանի խոսքով ուրվագծել 1908-1914-ի դեպքերը:

Ինչպես հայտնի է, թուրքական հեղափոխությունը տեղի ունեցավ 1908-ին, ոչ թե իրական սահմանադրական կարգեր հաստատելու համար երկրի մեջ, այլ միայն թուրք կայսրության խորտակումը հետաձգելու համար: Այս շարժման գլուխ կանգնած էին մի խումբ թուրք հայրենասերներ, որոնց նպատակն էր ամեն հնարամտության դիմել արտաքին աշխարհին ցույց տալու, թե տաճիկ կառավարությունը մտել է արդեն հիմնական բարենորոգման շրջան և, հետևաբար, այլևս կարիք չկա արտաքին միջամտության՝ Տաճկաստանի հպատակ ցեղերի իրավունքները պաշտպանելու համար: Իսկ մյուս կողմից թուրք «հեղափոխականները» ամեն հնարք գործ էին դնում երկրի ներսում թուրք ցեղի իրական տիրապետությունն ապահովելու համար, հակառակ սահմանադրական ռեժիմի տրամադրության:

Երիտասարդ թուրքերը վեց տարի շարունակ իրենց ցեղին հատուկ բոլոր հնարամտություններին դիմեցին այս անիրականալի նպատակը գործադրելու համար: Առաջին երկու տարին տարտամ փորձեր արվեցին՝ որոշ չափով հպատակ ցեղերի արդար պահանջների գոհացում տալու: Բայց ամեն անգամ լուրջ դիմադրության հանդիպեցին թուրք պահպանողական տարրերի կողմից: Եվ 1910 թվականին, Մելանիկի իրենց համագումարի մեջ «Երիտասարդ թուրքերը» վերջնականապես ընդունեցին համաթուրքական, կամ, ավելի ճիշտ, համաթուրանական ծրագիրը:

Մինչ այդ մենք՝ հայերս, հույս ունեինք, թե անցյալի

---

* Տպագրվում է ըստ հեղինակի՝ «Ապրած օրեր» հրատարակության. (Արմէն Գարո, «Ապրած օրեր», Բոստոն, Հայրենք տպարան, 1948թ.:)

դասերից օգտվելով, թուրք ղեկավարները քաղաքացիական իմաստություն պիտի ունենան մի վերջին փորձ անելու՝ Օսմանյան կայսրությունը անխուսափելի քայքայումից ազատելու համար: Միակ ճանապարհը, որ առկա էր, հասկացողության եզր գտնելն էր հպատակ ցեղերի հետ: Մեր այդ հույսերն հօդս ցնդեցին 1910 թվականին, երբ երիտասարդ թուրքերը սկսեցին յուրացնել իրենց նախորդների պետական տեսակետները և նոր միջոցներով աշխատել հավերժացնել թուրք ցեղի ձրիակերությունն՝ ի հաշիվ հպատակ ցեղերի:

Մեզ համար պարզ էր, որ այս պատմական կատակերգությունը երկար չէր կարող շարունակվել, և վաղ թե ուշ զենքի հաշվեհարդարություն ունենալու էինք թուրքերի հետ: Այդ պատճառով էլ սկսեցինք մեծ եռանդով զբաղվել մեր ժողովրդի ինքնապաշտպանության գործով: Մյուս կողմից սակայն խուսափում էինք հարձակողական քաղաքականությունից թուրքերի հանդեպ, որոնք իրենց ամբողջ ուժն ու ուշադրությունը դարձրել էին Մակեդոնիայի վրա: Մենք ուրիշ կերպ չէինք էլ կարող անել. մեր գավառներն արյունաքամ էին եղել համիդյան ռեժիմի օրով և կարիք ունեին հանգստի:

1895-ից մինչև 1908-ը՝ Սուլթան Համիդն իր ձեռքից եկածն արեց Հայաստանի մեր ժողովրդի դիմադրական կորովը խորտակելու համար: Բացառիկ օրենքներով կառավարվում էր ամբողջ կայսրությունը, որի ամենավտանգավոր հպատակները ընկալվում էին հայերը: Ամեն միջոցի դիմեց հայ ժողովրդի կյանքն անտանելի դարձնելու համար, մանավանդ Հայաստանի մեջ: Մասնավորապես՝ շատ տուժեցին Կարնո, Բիթլիսի և Վանի նահանգները, ուր կենտրոնացած էր մեր հեղափոխական գործունեությունը:

Այդքան արյունաքամ էր եղել այս երեք նահանգների հայ ժողովուրդը, որ, երբ 1908-ի տաճկական հեղափոխության շնորհիվ բացառիկ օրենքները ջնջվեցին, տեղական ժողովուրդը հազիվ սկսեց շունչ քաշել: Մոտ 50 հազար գաղթականներ Կովկաս վերադարձան այս երեք նահանգներից, իրենց քանդված տները վերաշինելու: Իրենց հետ նրանք բերեցին բավականաչափ դրամ և լծկան անասուններ: Մշո դաշտը, որը 1904 թվականից ի վեր այլևս ցորեն հացի երեսը չէր տեսել, 3-4 տարվա մեջ իր առաջվա բարեկեցությունը գտավ:

Ես ինքս 1913թ. անձամբ գնացի այդ շրջանը՝ մոտիկից տեսնելու մեր ժողովրդի նյութական դրությունը: Մշեցիք ինձ պատմեցին իրենց նեղությունների և այն հսկայական զոհողության մասին, որ իրենք արել էին մեր ազատագրական շարժման համար: Ամբողջ Մշո դաշտի մեջ միայն չորս ձի էր մնացել հայերի մոտ: Եվ այդ հարյուր հազարի հասնող գյուղացիության մեջ միայն Մուշաղենի Գասպար աղայի տանը կարելի էր մի քանի ձեռք անկողին գտնել, իսկ մնացածները քաղիքի մեջ էին պառկում: Քրդերն ու թուրք զինվորները տարել էին ամեն բան: Իսկ երբ 1913 թվականին Զավեն Պատրիարքը Մշո դաշտն այցելեց, հայերի 800 ձիավոր նրա դեմ գնացին: Հինգ տարվա հանգիստ կյանքն արդեն բավական էր մեր ժողովրդին ոտքի կանգնեցնելու:

Դրա համար էր որ մենք՝ Դաշնակցական երեսփոխաններս, մինչև 1912 թվականը Պոլսո պառլամենտի մեջ խիստ ընդդիմություն ցույց չէինք տալիս երիտասարդ թուրքերի կառավարությանը: Չէինք մոռանում երբեք և այն պարագան, որ նրանց ընդդիմադիր թուրք տարրերը մեծ մասամբ Սուլթան Համիդի քաղաքականության կողմնակիցներն էին և հակամետ էին նույնն անել, երբ ուժն իրենց ձեռք անցներ:

Եկավ 1912 թվականը, Բալկանյան պատերազմը: Տաճկաստանի բաժանման հարցը նորից սեղանի վրա դրվեց: Իհարկե մենք ևս չէինք կարող անտարբեր մնալ, երբ Հայաստանի բարենորոգման հարցը նորից առաջ կքաշվեր եվրոպական դիվանագիտության կողմից: Երիտասարդ թուրքերը լսել անգամ չէին ուզում եվրոպական կոնտրոլի մասին և սկսեցին կոտորածներով սպառնալ, եթե մենք պնդեինք եվրոպական կոնտրոլի մասին:

1913-ի դեկտեմբերին, մեր բարենորոգման մասին եղած բանակցության միջոցին, Ջեմալ փաշան գիշերը կանչել էր Վարդգեսին իր մոտ և նրան հայտնել էր հետևյալը.

«Եթե դուք պնդեք եվրոպական կոնտրոլի մասին, մենք ստիպված պիտի լինենք ընդունել: Բայց դրա արդյունքն այն կլինի, որ այդ վեց վիլայեթների իսլամ ազգաբնակչությունը ոտքի պիտի կանգնի, և 3-4 հարյուր հազար հայեր պիտի կոտորվեն: Եվ հավանական է, որ ռուսները, առիթից օգտվելով, պիտի գան և գրավեն այդ նահանգները»:

Երբ Վարդգեսը հարցրեց, թե ինչո՞ւ է այս բանն իրեն ասում, Ջեմալ փաշան պատասխանեց.

«Որպեսզի դու էլ գնաս ձերոնց ասես՝ խելքները գլուխները հավաքեն»:

Երբ Վարդգեսն այս լուրը բերեց, մենք լուրջ ժողով ունեցանք և որոշեցինք, որ Փոքր Սարգիսն ու ես գնանք Երիտասարդ թուրքերի մոտ և Կ. Կոմիտեի հետ խոսենք այս մասին:

Հաջորդ օրն իսկ ժամադրվեցինք նրանց կոմիտեի երկու գլխավոր անդամների հետ, Բերայի սրճարաններից մեկում: Եվ հայտնեցինք Միտհատ Շյուքրիին և Քյուչյուկ Ջեմալին, որ Հ. Յ. Դաշնակցությունն իրենց սպառնալիքին կպատասխանի հետևյալ սպառնալիքով. «Եթե գավառների մեջ որևէ կոտորածի դեպք պատահի, մենք անմիջապես կվերսկսենք մեր հեղափոխական գործունեությունը Պոլսի մեջ, և պատասխանատուները չեն ազատվի մեր ձեռքից»:

Մեր այս սպառնալիքն ապշեցրեց երկու բանագնացներին: Նրանք սկսեցին մեզ երդվել, որ Ջեմալն ինքնագլուխ է այդ հիմար խոսքերն ասել, և այլն և այլն:

Ջեմալի սպառնալիքը և մեր պատասխանն անմիջապես երևաց եվրոպական մամուլում: Եվ մի քանի օր հետո թուրք կառավարությունը զիջեց հիմնական կետով. բայց իհարկե ամեն տեսակ միջոցների դիմեց, որ եվրոպական կոնտրոլն անվանական լինի միայն:

1914-ի փետրվարին ստորագրվեց վերջապես այն համաձայնությունը, որով Հայաստանը պիտի բաժանվեր երկու մասի, և պիտի հրավիրվեն երկու եվրոպացի քննիչներ, ծրագրված բարենորոգումները գործադրելու համար:

Այս համաձայնությունը ստորագրվելուց անմիջապես հետո մեր անփոխարինելի դոկտոր Զավրյանն ու ես մեկնեցինք Եվրոպա, ընտրվելիք ընդհանուր քննիչների հետ ծանոթանալու և նրանց մեր իրականության հետ ծանոթացնելու:

Ճիշտ այդ միջոցին երկրում երեսփոխանական ընտրություններ էին տեղի ունենում: Եվ, իհարկե, Երիտասարդ թուրքերի համար գաղտնիք չէր իմ ճամփորդության նպատակը: Այդ իսկ պատճառով, հակառակ Կարնո հայ ընտրողների կամքին, իմ վերընտրությունս ձախողեցին և իմ փոխարեն ընտրել տվին Մատաթյան անունով պարոնին:

Հունիս ամսին վերադարձա Պոլիս մեր ընդհանուր քննիչների հետ

միասին: Բանակցության նոր շարք սկսվեց քննիչների և Պապը-Ալիի միջև: Քննիչներն իրենց ձեռքում ունեին օրինակն այն ծրագրի, որը ստորագրված էր տաճիկ կառավարության կողմից: Եվ, իբրև եվրոպացի մարդիկ, մեկը՝ նորվեգացի պ. Հոֆֆը, իսկ մյուսը՝ հոլանդացի պ. Վեստենենկը, հասկանում էին, որ իրենց իրավունքն ու պարտականությունն էր այդ ծրագիրը նույնությամբ գործադրել: Այս խեղճ եվրոպացիք առաջին անգամն էր, որ շփվում էին թուրք մտայնության հետ հանձինս՝ Թալեաթ փաշայի (այն ժամանակ՝ բեյի) և իր օգնականների:

Առավոտից երեկո մտնում էի Թոքաթլյանի մոտ իրենց տեսնելու և իրենց սիրտ տալու համար, որ չհուսահատեն Թալեաթի ինտրիգներից և պնդեն իրենց իրավունքները:

Փարիզից սկսած երկուսն էլ մեծ համակրանքով կապվեցին մեզ և մեր դատի հետ: Գիտեին, որ ես նախկին երեսփոխան էի և եվրոպական կրթություն ստացած: Երկուսն էլ փափագում էին, որ իրենց հետ, իբրև օգնական, գնամ Կարին կամ Բիթլիս: Ես նախընտրեցի Բիթլիսի շրջանը և խոստացա պ. Հոֆֆին ընկերանալ, եթե տաճիկ կառավարությունն իր համաձայնությունը տա: Պ. Հոֆֆը մի քանի անգամ Թալեաթին առաջարկեց իմ թեկնածությունն, իբրև մեկն իր ունենալիք չորս ոչ իսլամ օգնականներից: Ամեն անգամ Թալեաթը խուսափողական պատասխան էր տալիս. միշտ կրկնում էր, թե իմ հանդեպ մեծ հարգանք է տածում և այլն և այլն, բայց քաղաքական պատճառներով անհարմար է գտնում:

Այս բանակցությունները տևեցին շաբաթներ: Ամեն անգամ, երբ քննիչները ետ էին գալիս Թալեաթի մոտից, ավելի և ավելի ընկճված էին երևում: Իրենց պատմածներից հասկացվում էր, որ Թալեաթը, ռուսական և գերմանական դեսպանների անտարբերությամբ քաջալերված, ամեն օր ավելի հանդուգն է դառնում և չի ուզում որևէ լուրջ քայլ անել և ընդունված ծրագրի որևէ հիմնական կետը գործադրել: Այսպես, օրինակ, ընտրվելիք պաշտոնյաների կես առ կեսի սկզբունքը. ծրագրի մեջ որոշակի ասված էր, որ երկրի պաշտոնյաների կեսն իսլամ պիտի լիներ և կեսը ոչ իսլամ: Քննիչներն ունենալու էին 8 օգնականներ. 4 իսլամ և 4 ոչ իսլամ, իսկ Թալեաթը պնդում էր, որ դեռ վաղաժամ է գործադրել ծրագրի այդ կետը և կողմնակից է, որ տրվեն միայն երկուական ոչ իսլամներ:

Այս բանակցության ընթացքում պ. Հոֆֆը, հուսահատված թուրքերի համառությամբ և մի քիչ վիրավորված, որ իր առաջարկն իմ մասին մերժվում է, երեկոյան, վերադառնալով Պապը-Ալիից, ինձ հայտնեց, թե ինքը որոշել է հաջորդ օրը վերջնագրի ձևով խոսել Թալեաթի հետ և, եթե վերջինս չհամաձայնի իր պայմաններին, անմիջապես իր հրաժարականը պիտի տա: Իր պնդելիք գլխավոր կետերը հետևյալներն էին լինելու՝ փոխանակ երկուսի, ինչպես Թալեաթն էր առաջարկում, պահանջել երեք հայ օգնականներ, այն պայմանով, որ նրանցից մեկն անպատճառ ես լինեի:

Երբ այս լսեցի, իսկույն խնդրեցի իրեն իմ թեկնածությունը հանել իր ցանկից և պնդել, անպատճառ, որ ունենա չորս հայ օգնական: Հավաստիացրի իրեն, թե այս ձևով Թալեաթը մերժելու իրավունք չէր ունենա, քանի որ սկզբունքի հարց էր և ոչ թե՝ անձնավորության:

Պ. Հոֆֆն իմ այս առաջարկը լսելով ավելի ևս համոզվեց, որ մեզ հետաքրքրողը ոչ թե անձնական դիրքի կամ պաշտոնի խնդիրն էր, այլ մեր ազգային իրավունքների պաշտպանությունը և ավելի մեծ վստահությամբ սկսեց լսել իմ խորհուրդները:

Ճիշտ նույն օրերը մեր «Ազատամարտ» թերթը զինվորական ատյանի կողմից փակվեց Հայաստանի մարզպանների մասին գրված հոդվածաշարի պատճառով:

Վարդգեսն անձամբ գնացել էր Թալեաթին խնդրելու, որ եղած կարգադրությունը հետ կանչի, խոստանալով, որ այլևս այդպիսի բան չի պատահի: Թալեաթը կոպիտ կերպով մերժել էր, ասելով թե մենք չափն անց ենք կացնում արդեն մեր թերթով:

Երրորդ օրն էր, որ «Ազատամարտ»-ը լույս չէր ընծայվում, և մեր ընկերները չափազանց հուզված էին:

Խմբագրատանը մեր սիրելի Ռուբեն Զարդարյանը բռնեց օձիքս, որ ես գնամ Թալեաթի մոտ խնդրելու: Գիտեր, որ ես չեմ սիրում Երիտասարդ թուրքերին որևէ բան խնդրել. քանի անգամ մերժել էի մանր-մունր բաների համար դիմել Թալեաթին կամ մյուսներին: Բայց այնքան խնդրեց, որ չկարողացա մերժել և քայլերս ուղղեցի դեպի Պապը-Ալի:

1913-ի աշնանից Թալեաթին չէի տեսել: Երբ նույն տարի Հայաստան վերադարձա, մի անգամ միայն առիթ ունեցա նրան տեսնելու և բնավ չհավանեցի նրա մտայնությանը: Նույն տարվա հունվարին տեղի ունեցած հեղաշրջումը բոլորովին կերպարանափոխել էր իմ ճանաչած Թալեաթին: Իշխանության ծառան, հեշտությամբ ձեռք բերված հաջողությունից հարբած և ամբարտավանացած, թուրք օղլի թուրք էր դարձել: Եվ ես բնազդաբար մի տեսակ զարշանք էի զգում, երբ նա կեղծ մտերմություն էր ցուցադրում ինձ հետ խոսալու միջոցին:

Երբ ներս մտա ներքին գործոց նախարարի նախասենյակը, իր քարտուղարը՝ Ֆուատ բեյն իմ այցետոմսն անմիջապես ներս ուղարկեց: Ծառան, շուտով դուրս գալով, ինձ հրավիրեց ներս:

Թալեաթն, ըստ իր սովորության,շատ սիրալիր և մտերմորեն ինձ ընդունեց: Իր մոտ կային մի շարք հին և նոր երեսփոխաններ. ամեն մեկը մի խնդիր ուներ, և Թալեաթը գիտեր վարպետ կերպով օգտագործել նրանց մարդկային թուլությունները և, ամեն մեկին փոքրիկ ծառայություն անելով, կապել իր հետ: Ինձ հետ էլ փորձեց մի քանի անգամ անցյալ վեց տարիների ընթացքում նախարար կարգելու գնով իրեն կապել, բայց չհաջողվեց: Եվ այդ իսկ պատճառով որոշ ակնածանք էր զգում իմ հանդեպ ամեն անգամ, երբ հանդիպում էինք:

Այդ օրվա հանդիպման առթիվ ինձ ափսոսանք հայտնեց, որ Կարնոյի իրենց տեղական ընկերներն իմ դեմ պայքար էին մղում և ձախողեցին իմ վերընտրությունը և ավելացրեց, որ ինքը իբր թե որոշել էր ինձ ընտրել տալ Բիթլիսում: Իր այս խոսքը կարճ կտրեցի, ասելով, որ եթե այդպիսի բան անի առանց իմ ցանկության, ես ստիպված պիտի բաց նամակով հրաժարվեմ, բավական անախորժ բաներ ասելով իր հասցեին: Թալեաթը գիտեր, որ ասածս կանեմ, ուստի անմիջապես հրաժարվեց իր մտքից:

Հետո, երբ հարցրեց այցելությանս նպատակը, ասեցի, որ «Ազատամարտ»-ի համար եմ եկել:

- Բայց ձերոնք համը հանում են արդեն, - ասաց ժպտալով:

- Իսկ դուք, վաղուց ի վեր, համն էլ եք հանում, հոտն էլ, - պատասխանեցի նույնպես կատակով:

Երբ իր մոտ եղած հյուրերը դուրս գնացին, հեռախոսով խոսեց զինվորական վարչության հետ և կարգադրեց, որ հետ կոչեն իրենց հրամանը:

Այս խնդիրը կատարելուց հետո Թալեաթն ասաց.

- Բայց գիտե՞ս ինչ կա, Գարո: Ինձ թվում է, թե քանի գնում է, մենք այնքան իրարից հեռանում ենք, և պիտի գա մի օր, երբ այլևս իրար լեզու չպիտի հասկանանք:

- Իմ կարծիքով վաղուց է, որ մենք իրար չենք հասկանում. այն օրից, երբ դուք համաթուրքական քաղաքականություն սկսեցիք, - պատասխանեցի:

- Դուք սխալ եք հասկանում մեզ: Օրինակ, այս բարենորոգման հարցի մեջ շատ սխալ հիմունքներով առաջնորդվեցիք և չուզեցիք մեզ հետ գործակցել: Լավ պիտի լինի, որ մի անգամ լրջորեն խոսենք իրար հետ:

- Շատ բարի, - պատասխանեցի:

- Ե՞րբ կարող եք, երկու հոգի դուք ուղարկեցեք, երկու հոգի էլ մեզնից կգան:

- Լավ, այս երեկո, եթե հարմար է ձեզ:

- Շատ բարի, այս երեկո, Խալիլ բեյի տանը, ժամը 8-ին:

Այս կարճ խոսակցությունից հետո գնացի «Ազատամարտ»-ի խմբագրատուն, ուր հավաքվել էին մեր բոլոր պատասխանատու ընկերները, հայտնեցի իրենց իմ այցելության արդյունքը: Որոշվեց Վռամյանին և ինձ ուղարկել բանակցության:

Ժամը 8-ին Խալիլի տանն էինք, ուր մեր հանդիպեցինք Թալեաթին ու հաստափոր Խալիլին:

Թալեաթը սկսեց խոսակցությունը երկար առաջաբանով, որով աշխատում էր մեզ համոզել թե ինչպես, իրենց կամքին հակառակ, իրենք չկարողացան մինչև այսօր մեր արդարացի պահանջներին գոհացում տալ, այսինքն՝ հողային հարցի, դպրոցական խնդրի, հայ պաշտոնյաների շատացման հարցի, և այլնի և այլնի վերաբերմամբ: Եվ հետո, անդրադառնալով բարենորոգման խնդրին, Թալեաթը մեզ մեղադրեց, որ մենք արտաքին միջամտության դիմեցինք, փոխանակ ուղղակի իրենց հետ հասկացողության գալու:

Վռամյանը հաճախ ընդհատում էր նրա խոսքը և փաստերով ապացուցում ասածների անլրջությունը: Իսկ Խալիլ բեյը աշխատում էր Վռամյանին համոզել, ի մասնավորի, պաշտոնյաներին կես առ կեսի անկարելիության մասին:

Այս առթիվ Թալեաթն ակնարկեց Հոֆֆի հետ իր ունեցած բանակցությունը և ասեց, թե ինքը մերժեց իմ թեկնածությունս այն պարզ պատճառով, որ համոզված էր, որ եթե ես գնայի Հոֆֆի հետ, իբրև նրա օգնականներից մեկը, իրական ընդհանուր քննիչն ես պիտի լինեյի և ոչ թե Հոֆֆը, և այլն, և այլն:

Նրա այս ակնարկը վերացնելու համար Վռամյանը հայտնեց, որ իմ թեկնածության մասին խոսելն ավելորդ էր, քանի որ ես ինքս արդեն խնդրել էի Հոֆֆին իմ անունս դուրս հանել ցանկից: Բայց կես առ կեսի սկզբունքը չգործադրելն ամենալավ ապացույցն էր մեզ, որ իրենք դարձյալ հին աչքակապության ճամփան էին բռնել և առաջին քայլով իսկ ուզում էին վիժեցնել իրենց ստորագրած բարենորոգումները:

Ժամը 8-ից սկսած մինչև 11-ը՝ երեքով վիճում էինք: Ես ոչ մի խոսք չարտասանեցի. ուշադրությամբ դիտում էի Թալեաթի դեմքը, որ այս երեկո անասելի կերպով անհամակրելի էր երևում աչքիս: Ամեն անգամ, երբ Վռամյանը տաքանում էր և իրեն մի քանի անախորժ բաներ ասում, Թալեաթի դեմքի վրա սատանայական ժպիտ էր երևում, ինքնավստահ մար-

դուն հատուկ, որը ծիծաղում էր դիմացինի վրա:

Ի վերջո երկուսն էլ նկատեցին, որ ես բնավ խոսքի չեմ խառնվում: Թալեաթը, դառնալով ինձ, ասաց.

- Գարո, դու ինչո՞ւ այս երեկո բնավ չես խոսում:

- Ինչ խոսեմ, երբ որոշակի տեսնում եմ, թե դուք այնքան հպարտացել եք ձեր վերջին հաջողություններով, որ մեզ հետ խաղալ եք ուզում, - պատասխանեցի:

- Ես բողոքում եմ քու այդ դարձվածքի համար և խնդրում, որ ապացուցես ասածդ:

- Եթե Վռամյանը չկարողացավ ձեզ համոզել, ես բնավ չպիտի կարողանամ անել: Միայն այսքանը պիտի ասեմ, որ դուք սխալ ճամփայի վրա եք. ձեր բռնած այս ընթացքը Օսմանյան կայսրությունը պիտի տանի դեպի խորխորատ: Դուք ձեր վերջին հաջողություններով հարբած, տարվել եք մեծամոլությամբ, երևակայելով, թե Նապոլեոններ և Բիսմարքներ եք:

- Բիսմարքը ե՞ս եմ, - ընդհատեց Թալեաթը ժպտալով:

- Այո դու ես. բայց շատ կսխալվես այդպես կարծելով: Դուք բոլորդ տգետների հավաքածու եք և անընդունակ՝ հասկանալու, թե ո՞ւր կառաջնորդեք այս պետությունը: Ապացո՞ւյց ես ուզում ասածիս: Քիչ առաջ դու չէի՞ր, որ Վռամյանին ասում էիր, թե դուք քուրդերին պիտի թրքացնեք: Ինչո՞վ, ձեր ո՞ր կուլտուրական շնորքով. եթե պատմություն գիտենային, այդպիսի անհեթեթություններ չպիտի ասեիր: Մոռանում ես, թե 5-600 տարի է, որ դուք՝ թուրքերդ եկաք մեր երկիրը, իսկ ձեզանից առաջ շատ ուրիշ ազգեր են եկել ու գնացել մեր և քուրդերի գլխով՝ պարսիկները, հռոմեացիք, արաբները և բյուզանդացիք: Եթե նիանցից ոչ մեկը չկարողացավ քուրդերին ձուլել, դուք ինչո՞վ եք ձուլելու: Անցյալ ամառ ճամփորդեցի մեր երեք վիլայեթների մեջ և միայն երեք կամուրջ տեսա այդ ահագին տարածության վրա. նրանցից երկուսը հին հայկական կառույցներ են, իսկ մյուսը՝ Լենկթեմուրն է կառուցել: Իսկ ձեր քաղաքակրթության հետքն անգամ չտեսա: Չի կարելի այդպես թեթև կերպով վերաբերվել պետական լուրջ հարցերին:

Գալով մեր հարցին, դուք անկեղծ չեք: Դուք կարծում եք, թե հաջողացնելու եք խոստումներով մեզ քնեցնել այստեղ և երկրի մեջ էլ այնպիսի տնտեսական և քաղաքական պայմաններ ստեղծել, որ Հայաստանը դատարկվի հայերից և դուք միանգամ ընդմիշտ ազատվեք Հայկական հարցից: Այս է ձեր տգիտության երկրորդ ապացույցը: Սխալվում եք ձեր հաշիվների մեջ: Մենք ձեզ այդքան ժամանակ չենք տալու, որ ձեր ծրագիրները գործադրեք: Մեր ազգային գիտակցությունն այնքան զարգացած է, որ մենք պիտի նախընտրենք քարուքանդ անել այս մեծ շենքը, որի անունն է Օսմանյան կայսրություն, և ձեզ թույլ չտալ, որ տեսնեք Հայաստանն առանց հայի: Գիտեմ, մենք մնալու ենք այդ փլատակների տակ և շատ ենք տուժելու: Բայց վերջին հաշվով մենք ավելի շահով ենք դուրս գալու, քան դուք՝ դուք մեծ կայսրություն եք կորցնելու, իսկ մենք այդ փլատակների տակից դուրս ենք գալու, թեև արյունլվա, բայց ձեզնից ազատված մեկ անգամ և ընդմիշտ:

Երբ ես վերջացրեցի, Թալեաթը բացականչեց.

- Այդ ինչ կխոսես, Գարո. դու բոլորովին փոխված ես երևում:

- Միջներիցս եթե փոխված կա, դուք եք, որ ձեզ մեծ մարդիկ եք կարծում: Մենք առաջվա հայ հեղափոխականներն ենք, և ձեզ ասում ենք այն, ինչ որ միշտ ասել ենք. «Ձեզ թույլ չենք տա, որ մեր դարավոր հայրե-

նիքից դուրս քշեք մեր աշխատավոր ժողովրդին՝ հոգուտ թափառաշրջիկ քուրդերի և Ռումելիից փոխադրվող մահաճիրների»:

Թալեաթը կաս կտրեց և սկսեց հաճախակի թևի ժամացույցին նայել: Հանկարծ ոտքի ելավ և ասաց, թե ժամը 11-ին ժամադրություն ունի, ցավում է, որ այս խոսակցությունը կիսատ է մնում, և մեկնեց, խնդրելով, որ ուրիշ օր նորից հանդիպենք իրար համոզելու համար:

Նրա մեկնելուց հետո Խալիլը փորձեց խոսակցությունը շարունակել, բայց ո՛չ ես և ո՛չ էլ Վռամյանն այլևս խոսելու տրամադրություն չունեինք: Մենք այլևս իրար չհանդիպեցինք:

1914-ի հունիսի վերջին օրն էր: Մեկ ամիս հետո ընդհանուր եվրոպական պատերազմը սկսվեց: Թալեաթն ու իր համախոհները փորձեցին առիթից օգտվել և իրագործել իրենց դիվային ծրագիրը: Արդյունքը՝ հայտնի է...